ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՔԻՄԻԱ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Պատասխանատու`      ԳՅՈՒԼՆԱՐԱ ՓԱԼԻԿՅԱՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը շնորհակալություն է հայտնում ՀՀ բուհերի ամբիոններին, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին, ուսուցիչներին և բոլոր շահագրգիռ անձանց` գործող ուղեցույցի վերաբերյալ հայտնած կարծիքների, առաջարկությունների և դիտողությունների համար:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԲԱՆ........................................................................................................................... 4

1. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ........................................................................................................ 5

2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ................................................................................................ 5

3. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ.................................................................11

4. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.......................................................................................................................11

5. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ՆՄՈՒՇԸ............................................................................ 12

## ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են ‹‹Քիմիա›› առարկայի միասնական քննության թեստերի կառուցվածքը, տարբեր կառուցվածք ունեցող առաջադրանքների նմուշ օրինակներ, պատասխանների ձևաթուղթը և դրա լրացման կարգը, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

Միասնական քննության համար որպես հիմք են ընդունվել հանրակրթական հիմնական դպրոցում գործածության համար երաշխավորված քիմիայի ծրագրերը և դասագրքերը, ավագ դպրոցի քիմիայի ընդհանուր հոսքի ծրագրերն ու երաշխավորված դասագրքերը, ինչպես նաև «Քիմիա›› առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների շտեմարանները՝ համապատասխան փոփոխություններով:

**Քննական թեստերը կազմվում են «Շտեմարաններում» առկա առաջադրանքներից և «Շտեմարանների» առաջադրանքների հիմքի վրա կազմված նոր առաջադրանքներից:**

## 1. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Քիմիա» առարկայի միասնական քննական թեստը ներառում է 57 առաջադրանք (80 միավոր): Թեստում առաջադրանքները երեք կառուցվածքային տիպի են՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և պնդումների փունջ:

Թեստում 40 առաջադրանք (1-40-րդ) ընտրովի պատասխանով են և ընդգրկում են քիմիայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները: 41-68-րդ առաջադրանքներն ու ենթաառաջադրանքները կարճ պատասխանով են, որոնցից *մեկը կարճ պատասխանով համապատասխանեցնելու առաջադրանք է, իսկ 69-րդ և 70-րդը* ՝ պնդումների փունջեր են:

Միասնական քննական թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

Բուհ ընդունվելու համար միասնական քննության միավորը հաշվարկվում է 20 միավորանոց սանդղակով՝ հիմնվելով ամբողջ աշխատանքի կատարման արդյունքում դիմորդի հավաքած միավորների վրա:

## 2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Ա. Պարզ առաջադրանքներ

*Այսօրինակ առաջադրանքների համար տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:*

Նմուշ 1. Ածխածնի առաջացրած ո՞ր պարզ նյութի բյուրեղավանդակն է պատկերված, և ի՞նչ հիբրիդային վիճակում են գտնվում ածխածնի ատոմներն այդ նյութում:

1) ալմաստ, $sp^3$
2) գրաֆիտ, sp
3) ֆուլերեն, sp
4) գրաֆիտ, $sp^2$



Բ. Համապատասխանեցում:

*Այսօրինակ առաջադրանքների համար տրվում են երկու կամ երեք սյունակներ և դրանց տողերի համապատասխանեցումով կազմված պատասխանների տարբերակներ: Տրված շարքերից պետք է ընտրել պատասխանների այն տարբերակը, որում տողերի համապատասխանեցումը ճիշտ է:*

Նմուշ 2 . Համապատասխանեցրե՛ք դարձելի ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումը հավասարակշռության տեղաշարժի ուղղության հետ՝ ճնշումը և ջերմաստիճանը միաժամանակ բարձրացնելիս.

| Ռեակցիայի հավասարում | Ճնշման բարձրացում | Ջերմաստիճանի բարձրացում |
|---|---|---|
| ա) $2SO_{2(գ)} + O_{2(գ)} \rightleftarrows 2SO_{3(գ)} + Q$ | 1) դեպի աջ | Ա) դեպի ձախ |
| բ ) $2CO_{(գ)} \rightleftarrows C_{(պ)} + CO_{2(գ)} - Q$ | 2) դեպի ձախ | Բ) չի տեղաշարժվի |
| գ) $2Fe_{(պ)} + O_{2(գ)} \rightleftarrows 2FeO_{(պ)} + Q$ | 3) չի տեղաշարժվի | Գ) դեպի աջ |
| դ) $I_{2(գ)} + H_{2(գ)} \rightleftarrows 2HI_{(գ)} + Q$ | | |

*Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.*

1) ա1Ա, բ1Գ, գ1Ա, դ1Ա
2) ա1Ա, բ1Գ, գ1Ա, դ3Ա
3) ա3Ա, բ3Գ, գ2Ա, դ1Ա
4) ա1Գ, բ3Ա, գ1Գ, դ3Գ

Գ. Համարների շարքի ընտրություն:

*Այսօրինակ առաջադրանքների համար տրված շարքերից_պետք է ընտրել պահանջին համապատասխանող համարների (տառերի կամ թվերի) հաջորդականությունը:*

Նմուշ 3. Հետևյալ մասնիկներից որո՞նք կարող են ցուցաբերել վերականգնիչ հատկություն.
*ա) $Cl^{0}$, բ) $Cl^{-}$, գ) $Na^{0}$, դ) $Na^{+}$, ե) $S^{+2}$, զ) $S^{+6}$:*

1) բ, գ, զ
2) ա, բ, դ
3) ա, բ, գ, ե
4) բ, դ, ե, զ

Դ. Երկհարցանի առաջադրանքներ:
*Այսօրինակ առաջադրանքների համար տրվում է երկու հարց՝ պատասխանների ընտրությամբ: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր:*

Նմուշ (4-5). Անոթում նորմալ պայմաններում խառնել են մեկական մոլ մեթան և էթան:

*4. Որքա՞ն է գազային խառնուրդի զանգվածը (գ):*

1) 2
2) 16
3) 30
4) 46

*5. Որքա՞ն է գազային խառնուրդի խտությունը ըստ ջրածնի:*

1) 8
2) 11,5
3) 15
4) 23

**Գնահատման չափանիշը:** 1-40-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

**Ձևաթղթի լրացման կարգը**: Պատասխանների ձևաթղթում 1-40-րդ առաջադրանքներից յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված է չորս վանդակ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Օրինակ՝ ենթադրենք, 3–րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 1–ինն է (տե՛ս նկար 1):




Նկ.1

II. Կարճ պատասխանով առաջադրանքներ

Ա. Համապատասխանեցում <u>կարճ պատասխանով</u>:

*Այսօրինակ առաջադրանքների համար տրվում են երկու սյունակ և դրանց տողերի համապատասխանեցումով կազմվում է պատասխանը:*

Նմուշ 1. Համապատասխանեցրե՛ք թթվի քիմիական բանաձևը և քլոր տարրի օքսիդացման աստիճանը:

| Բանաձև | Քլորի օքսիդացման աստիճանը |
|---|---|
| ա) $HClO$<br>բ) $HClO_2$<br>գ) $HClO_3$<br>դ) $HClO_4$ | 1) +1<br>2) +5<br>3) -1<br>4) +3<br>5) +7<br>6) 0 |

**Ձևաթղթի լրացման կարգը:** Այս առաջադրանքին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ նախատեսված հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ նիշ՝ պահպանելով տառերի և թվերի ճիշտ համապատասխանությունը:




Նկ. 3

Բ. Մեկ, երկու և երեք ենթաառաջադրանքից կազմված խնդիրներ:

Նմուշ(1-3). Նատրիումի հիդրոկարբոնատի 17,5 % զանգվածային բաժնով 672 գ լուծույթին ավելացրել են 171 գ բարիումի հիդրօքսիդ պարունակող 585 գ լուծույթ: Ռեակցիաներն ավարտվելուց հետո նստվածքը առանձնացրել են լուծույթից:

1) *Որքա՞ն է նստվածքի զանգվածը (գ):*
2) *Ի՞նչ զանգվածով (գ) լուծույթ է ստացվել:*
3) *Որքա՞ն է լուծույթում պարունակվող ալկալիի զանգվածը (գ):*

***Հաշվարկներում պետք է օգտագործել հարաբերական ատոմային զանգվածների կլորացված արժեքները (բացի քլորից՝ 35,5):***

**Գնահատման չափանիշը:** Թեստի 41-68-րդ առաջադրանքներից և ենթաառաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

**Ձևաթղթի լրացման կարգը:** 41-68-րդ առաջադրանքներին ու ենթաառաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ ձևաթղթում նախատեսված հորիզոնական չորս վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան: Առաջադրանքի պատասխանը կարող է լինել 0-9999-ը ամբողջ թվերից որևէ մեկը: Օրինակ, ենթադրենք, 51-րդ առաջադրանքի պատասխանը 8 է, 52 –րդինը՝ 65, 53 –րդինը՝ 216, 54–րդինը՝ 6439: (տե՛ս նկար.3):




Նկ.2

III. Պնդումների փունջ

Այսօրինակ առաջադրանքներից յուրաքանչյուրում ներկայացվում է վեց պնդում որևէ թեմայի վերաբերյալ, որոնցից յուրաքանչյուրին կարելի է տալ երեք պատասխան՝ «Ճիշտ է», «Սխալ է» կամ «Չգիտեմ»: Այդ առաջադրանքներից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:

**Նմուշ. Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը ծծմբի (IV) օքսիդի վերօքս հատկությունների վերաբերյալ:**

1) *$SO_2+2H_2O+Cl_2=H_2SO_4+2HCl$ ռեակցիայում օքսիդացման արդյունքում ստացված նյութի գործակիցը 1 է:*
2) *$5SO_2+2KMnO_4+2H_2O=K_2SO_4+2MnSO_4+2H_2SO_4$ ռեակցիայում այն վերականգնիչ է:*
3) *$SO_2+2H_2S=3S+2H_2O$ ռեակցիայում ամբողջ ծծումբը ստացվում է ծծմբի (IV) օքսիդի վերականգնումից:*
4) *$2SO_2+O_2=2SO_3$ ռեակցիայի 80 % ելքի դեպքում $m_{\text{գոյացած}}(SO_3) = m_{\text{փոխազդած}}(SO_2)$:*
5) *$SO_2+2NaOH=Na_2SO_3+2H_2O$ ռեակցիայում այն օքսիդիչ է:*
6) *$SO_2 + 2H_2S = 3S + 2H_2O$ ռեակցիայում ծծմբի (IV) օքսիդը ցուցաբերում է օքսիդացնող հատկություն:*

**Գնահատման չափանիշը***:* Յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար տրվում է մեկական միավոր: Յուրաքանչյուր սխալ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար փնջից դիմորդի հավաքած միավորներից հանվում է մեկ միավոր: Եթե հանվող միավորների թիվը հավասար է կամ գերազանցում է տրվող միավորների թիվը, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է զրո և ամբողջ թեստից վաստակած միավորներից միավոր չի հանվում: «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում և չի հանվում:

**Ձևաթղթի լրացման կարգը:** Պատասխանների ձևաթղթում պնդումների փնջի յուրաքանչյուր պնդման համարի ներքևում տրված է երեք վանդակ: Տրված պնդման պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է դրան համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Օրինակ, ենթադրենք, «Պնդումներ փունջ» առաջադրանքի համար ընտրվել են՝ 1-ինը՝«Ճիշտ է», 2-րդը՝ «Ճիշտ է», 3-րդը «Սխալ է», 4-րդը «Ճիշտ է», 5-րդը «Սխալ է», 6-րդը «Ճիշտ է» պատասխաններ ապա պետք է լրացնել հետևյալ ձևով (տե՛ս նկ. 2).



Նկ.3

**Ձևաթղթում պատասխանների ուղղման կարգը:** Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու 5 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, 2-ը՝կարճ պատասխանով առաջադրանքների համար, 1-ը՝պնդումների փնջի համար: Եթե անհրաժեշտ է փոխել ընտրովի պատասխանով առաջադրանքի սխալ նշված պատասխանը, ապա նախատեսված դաշտի հորիզոնական վանդակում պետք է գրել առաջադրանքի համարը, իսկ նրանից ներքև համապատասխան վանդակներից մեկում դնել «X» նշանը (տե՛ս նկար. 4):



Նկ.4

Կարճ պատասխանով, այդ թվում նաև «Համապատասխանեցում կարճ պատասխանով» առաջադրանքների սխալ նշված պատասխանը փոխելու դեպքում ուղղման դաշտում հորիզոնական երկու վանդակներում գրվում է առաջադրանքի համարը, որից հետո վանդակներում լրացվում է պատասխանը (համապատասխանության համար՝ պահպանելով տառերին համապատասխանացրած թվերի հաջորդականությունը): Նկար 5-ում պատկերված է կարճ պատասխանով համապատասխանության ուղղված պատասխանը, (ա-2, բ-5, գ-3, դ-5):



Նկ.5

Պնդումների փնջի սխալ նշված պատասխանը փոխելու դեպքում ուղղման դաշտում վերևի հորիզոնական վանդակներում պետք է գրել առաջադրանքի համարը և պնդման համարը, իսկ նրանից ներքև համապատասխան վանդակում դնել ‹‹X›› նշանը (տե՛ս նկար 6):




Նկ. 6

## 3. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

«Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննական թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի «Քիմիա» առարկայի ուսումնական ծրագրերի: Ստորև ներկայացվում են յուրաքանչյուր բաժնից թեստում ընդգրկված առաջադրանքների տոկոսային և միավորային համամասնությունները (տե՛ս աղյուսակ 2)

*Աղյուսակ **2***

| *Հ/Հ* | *Քիմիայի հիմնական բաժիններ* | *Մոտավոր մասնաբաժին (%)* |
|---|---|---|
| *1* | *Ընդհանուր քիմիա* | *34-35* |
| *2* | *Անօրգանական քիմիա* | *35-36* |
| *3* | *Օրգանական քիմիա* | *26 -23* |
| *5.* | *Քիմիան և կյանքը* | *5-6* |
| | *Ընդամենը* | *100* |

## 4. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

**Քննական սենյակում թույլատրվում է ունենալ՝**

- քիմիական տարրերի պարբերական աղյուսակ
- աղերի լուծելիության աղյուսակ
- մետաղների լարվածության էլեկտրաքիմիական շարքը
- հաշվիչ

## 5. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ՆՄՈՒՇԸ

2024թ. միասնական քննություն

ԳԹԿ անձնական համար

*Պատասխանների ձևաթուղթ*

*Քիմիա*

ազգանուն

անուն հայրանուն

*Եղե՛ք ուշադիր*

* Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
* Ընտրովի պատասխանով առաջադրանքներում և պնդումների փնջերում Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):
* Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով 1 2 3 4 5 6 7 8 9 0

1 1

Թեստ № 1 2 3 4

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Պատասխանի համարը

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20

21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

Կարճ պատասխաններ

41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60

61 62 63 64 65 66 67

68 ա բ գ դ

**Ամբողջ ձևաթղթում սխալ նշված պատասխանները փոխելու տեղը**

Ընտրովի

Կարճ

**Պնդումների փունջ**

69 1 2 3 4 5 6
Ճիշտ է
Սխալ է
Չգիտեմ

**Պնդումների փունջ**

70 1 2 3 4 5 6
Ճիշտ է
Սխալ է
Չգիտեմ

**Պնդումների փունջ**

Ճիշտ է
Սխալ է
Չգիտեմ

*Արտագրե՛ք այս նախադասությունը*

*Ծանոթ եմ քննության կարգին:*